ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

1 նոյեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

155
(2635)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 124

Խորհրդարանում երեկ մեկնարկել են ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկումները: Ավանդաբար կառավարությունների ղեկավարներն են բյուջեները ներկայացնում խորհրդարանին. երեկ աննախադեպ էր, որ անձամբ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը չկար: Նա Սոչիում էր, խորհրդարանում կլինի վաղը եւ ելույթ կունենա: Մինչ այդ «Ժողովուրդ» օրաթերթը հիշեց մանիպուլյատիվ հայտարարությունները, որոնք նա արել է նախորդ տարիներին նույն թեմայով ելույթ ունենալիս: Այս տարվա մայիսի 6-ին նա խորհրդարանում ներկայացնում էր կառավարության ծրագրի կատարման ընթացքի մասին զեկույցը եւ խոսեց պարգեւավճարների մասին, որոնք առկա են նաեւ հաջորդ տարվա բյուջեում: «Ես էլի ուզում եմ անդրադառնալ պետական ծառայողների եւ պաշտոնյաների աշխատավարձի բարձրացմանը: Ես ուզում եմ կրկին ընդգծել, այո՛, իմ որոշմամբ դա տեղի է ունեցել, եւ դա տեղի է ունեցել, որովհետեւ Հանրապետության հրապարակի հեղափոխական հարթակից ես խոստացել եմ, որ պետական ծառայողների աշխատավարձերը կբարձրանան, եւ այդ խոստումը ի կատար է ածվել: Ինչո՞ւ պարգեւավճարների համակարգով եւ ոչ աշխատավարձերի համակարգով. որովհետեւ գործող աշխատավարձերի համակարգը, որն այսօր գործում է, իր ստեղծման առաջին օրից դեֆորմացված է, եւ այսօր մենք հանրային ծառայության բարեփոխումների շրջանակներում այս ողջ պրոցեսը, որը մենք հիմա իրականացնում ենք դե ֆակտո որպես աշխատավարձ, դե յուրե որպես պարգեւավճար կտրանսֆորմացնենք ձեր հաստատմամբ եւ աջակցությամբ որպես աշխատավարձի համակարգ», -ասել էր Փաշինյանը: Սակայն նրա մատնանշած «հեղափոխական հարթակից» Նիկոլ Փաշինյանը պարգեւավճար բաժանելու խոստում չէր տվել: Նա խոստացել է բարձրացնել պետական աշխատողների ու ոստիկանների աշխատավարձերը: «...Պետական աշխատողների եւ ոստիկանների աշխատավարձը կբարձրացվի, որպեսզի նրանք շաբաթ-կիրակի օրերին ստիպված չլինեն բետոն թափել սրա-նրա հայաթներում իրենց ընտանիքը պահելու համար… », - ասել էր նա: Այսինքն՝ այսպես նա փորձել է արդարացնել պարգեւավճարները ու դրանցից չհրաժարվելը, սակայն հերթական անգամ խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Ազգային ժողովի իշխող մեծամասնությունը՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը, ոչ միանշանակ է ընդունել, ընկալել ու վերլուծել Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում շաբաթ օրը տեղի ունեցած հանրահավաքը: Արցախը հանձնելու պատրաստ Փաշինյանի թիմին առավել ոչ թե խորհրդարանի կողմից ընդունված հայտարարությունն է հուզել (ինչն, ի դեպ, առանց էմոցիաների էր ու կոռեկտ), այլ բազմահազարանոց ցույցն ու արցախցիների՝ Ռուսաստանի ներկայությունն իրենց մոտ ավելացնելու տրամադրվածությունը: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՔՊ-ական պատգամավորներից ոմանք անկեղծացան, թե դա, ասես, Հայաստանից դժգոհելու ու վիզը դեպի Ռուսաստան ծռելու մասին հավաք էր: «Բայց եթե Հայաստանից աջակցություն չլիներ, կամ, օրինակ, ՀՀ-ն Արցախում տներ չկառուցեր (ի դեպ, հաճախ Արցախում մեծ թափով շինարարություն ենք անում՝ ՀՀ-ում տներ չկառուցելու հաշվին), ապա ի՞նչ էր լինելու այնտեղ. պարզապես մարդ չէր մնալու: Ուղղակի կարելի է գնահատել այդ ամենը»,- նեղսրտած ասաց մեր զրուցակիցը: Մեկ այլ ՔՊ-ական էլ նշեց, որ հանրահավաքն այն բանի արձանագրումն էր, որ ցանկացած հարց, Արցախի ցանկացած կարգավիճակ պետք է քննարկել ու ընդունել Արցախի անմիջական մասնակցությամբ: «Ի վերջո աշխարհը տեսավ, որ այնտեղ ապրող մարդիկ իրենց ասելիքն ունեն ու ունեն ինքնորոշման իրենց իրավունքը: Բայց մեզ համար կարեւոր է այն, որ Արցախի հարցը տարանջատվի Հայաստան-Ադրբեջան հարցից, որովհետեւ Արցախի հարցում մեծ դերակատարում ունեն ռուս խաղաղապահներն ու ՌԴ-ն, ինչը չպետք է խառնել ՀՀ-Ադրբեջան հարցերի հետ»,- նշեց նա: Ինչ վերաբերում է «խաղաղության պայմանագրի», այսպես ասած, ռուսաստանյան ու եվրոպական տարբերակներին, ապա այստեղ եւս ՔՊ-ականների տեսակետները տարբեր են: Մի մասը Վաշինգտոնի առաջարկներին է կողմ, մյուս մասը՝ Մոսկվայի: «Հարցն այն է, սակայն, թե Մոսկվայի առաջարկներն ինչքանով են ընդունելի Ադրբեջանի համար: Թե չէ մենք, այո, պատրաստ ենք քննարկել ու ստորագրել Պուտինի առաջարկներով ներկայացված «խաղաղության պայմանագիրը»,- նշեց մեր զրուցակիցը: Ի դեպ, ՔՊ-ականները մեծամասամբ չեն համարձակվում հրապարակավ խոսել այս թեմաներով. Նիկոլ Փաշինյանն արգելել է: Միայն հաշված թվով ՔՊ-ականներ են խոսում՝ մի քանի ԶԼՄ-ների հարթակներում:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ 2022 թվականի սեպտեմբերի 21-ին «Եռաբլուր»-ում տեղի ունեցած խայտառակ միջադեպի առիթով ծառայողական քննությունը կասեցվել է: Հիշեցնենք, որ «Եռաբլուր» զինվորական պանթեոնում տեղի ունեցած քաշքշուկի առիթով ՀՀ ոստիկանության Ներքին անվտանգության վարչությունում ծառայողական քննություն էր սկսվել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում գործի կասեցման մասին մեր ունեցած տեղեկությունը հաստատեց ՀՀ ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանը: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ երբ Քննչական կոմիտեում քրեական գործ կամ վարույթ է հարուցվել, ոստիկանությունը որոշել է Ներքին անվտանգության վարչությունում առկա քննությունը կասեցնել մինչեւ այդ քրեական գործի ավարտը: Այսինքն՝ Քննչական կոմիտեի քննության ավարտից հետո ոստիկանության ղեկավարությունը իր համապատասխան քայլերը կիրականացնի: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ միջադեպից միայն մի քանի օր անց հարուցված քրեական գործով մինչեւ օրս որեւէ ոստիկան կամ հրաման տվող սպա պատասխանատվության չի ենթարկվել: Նշենք, որ կան ծնողներ, որոնց մարմնական վնասվածքներ ստանալու փաստը փորձաքննությամբ հաստատված է, ծնողները տուժող են ճանաչվել, սակայն ոչ ոք պատասխանատվություն չի կրել առ այսօր: Թերեւս չի էլ լինի պատիժ, քանի որ այդ ծեծն ակնհայտորեն ուներ քաղաքական հրահանգ:



Հայաստան արտերկրից ուղարկված փողերի ներհոսքը զգալի ավելացել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ այս տարվա սեպտեմբերին ֆիզիկական անձանց անունով բանկերի միջոցով արտերկրից ստացված տրանսֆերտների զուտ ներհոսքը կազմել է 309 միլիոն 24 հազար դոլար: Նկատենք, որ, օգոստոս ամսվա համեմատ, Հայաստան ուղարկված դրսի փողերի՝ տրանսֆերտների զուտ ներհոսքը ավելացել է 17 միլիոն 832 հազար դոլարով: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ սեպտեմբերին տրանսֆերտները շարունակել են այս տարվա օգոստոս եւ հուլիս ամիսների համեմատ աճել, բայց հունիս ամսվա համեմատ՝ այն զգալի նվազել է: Բացի այս, նշենք, որ Ռուսաստանի Դաշնությունից ստացված զուտ ներհոսքը, այլ կերպ ասած՝ Հայաստան եկած ու մնացած գումարը սեպտեմբեր ամսին կազմել է 377 մլն 916 հազար դոլար: Այն, օգոստոս ամսվա համեմատ, 81 մլն 167 հազար դոլարով ավելացել է: Նշենք, որ այդ գումարների մեծ մասը փոխանցում են արտերկրում աշխատող հայերը, եւ նրանց կողմից ուղարկված գումարները այստեղ ապրող նրանց ընտանիքների ապրուստի հիմնական միջոցներն են: Մյուս կողմից, պակասել է ԱՄՆ-ից Հայաստան ստացված տրանսֆերտների զուտ ներհոսքը. եթե այս տարվա օգոստոսին այն կազմել է 33 մլն 293 հազար դոլար, ապա սեպտեմբերին դարձել է 22 մլն 614 հազար դոլար:

ՀԱՐՑԱԴՐՈՒՄՆԵՐ

ԱՐՑԱԽԸ ՊԵՏՔ Է ԳՆԱՀԱՏԻ

Հոկտեմբերի 30-ին Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում, բազմահազարանոց ցույցին զուգահեռ, հայկական երկրորդ հանրապետության խորհրդարանը ճնշակել ու հատուկ հայտարարություն է ընդունել, որ վերաբերում է, այսպես ասած, խաղաղության պայմանագրին ու Արցախի հետագա կարգավիճակին: Ըստ այդ հայտարարության՝ արցախցիները միաբերան պնդում են՝ «Հայաստանի Հանրապետության իշխանությունները պե՛տք է հրաժարվեն ներկայումս ունեցած աղետալի դիրքորոշումից: Ոչ մի իշխանություն իրավունք չունի «խաղաղության» պատրվակով Արցախի համար անընդունելի կարգավիճակի, ինչպես նաեւ միջազգայնորեն ճանաչված ինքնորոշման իրավունքի բանակցային նշանակություն իջեցնելու»: Թեմայի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր, ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Գեւորգ Պապոյանի հետ:

-Պարոն Պապոյան, արցախցիները հստակ նշում են՝ Արցախը որեւէ կարգավիճակով Ադրբեջանի կազմում լինել չի կարող: Ստեփանակերտում հոկտեմբերի 30-ին տեղի ունեցած ցույցի ժամանակ ի՞նչ «մեսիջներ» եք տեսել արցախցիների կողմից:

-Արցախի հայկականության համար մենք արցախցիներին թոշակ, նպաստ ու աշխատավարձ ենք տալիս, Արցախում տներ ենք կառուցում ու մարդկանց տալիս: Առհասարակ, Արցախում երբեմն շատ ավելին ենք անում, քան Հայաստանում: Դրա նպատակը Արցախի հայկականությունը պահպանելն է: Ինչ վերաբերում է Արցախի անվտանգությունն ապահովելուն, ապա դրա համար բանակցում ենք՝ հաճախ ՀՀ-ի հաշվին: Կարծում եմ՝ դա, առաջին հերթին, պետք է գնահատեն արցախցիներն ու Արցախի իշխանությունները:

-Չգնահատելու միտո՞ւմ եք տեսել նրանց կողմից:

-Ոչ, պարզապես Ձեր հարցադրմանն իմ մեկնաբանությունը այդպիսին է, եւ այս կոնտեքստում այդ մասին, այո, պետք է խոսել: Միայն պահանջներ չէ, որ պետք է ներկայացնել, պետք է գնահատել նաեւ այն, ինչ արվում է, իսկ արվում է բավական մեծ բան: Մեկ շնչի հաշվով ՀՀ քաղաքացին, ի տարբերություն արցախցու, շատ-շատ ավելի հարկ է վճարում, բայց ՀՀ քաղաքացին շատ ավելի քիչ է աշխատավարձ ստանում, քան Արցախի բնակիչը: Ու դա նրա հաշվին է, որ Հայաստանի պետական բյուջեից հսկայական աջակցություն կա Արցախին: Իսկ երբեւէ պատկերացրե՞լ եք, որ այդ աջակցությունը չլիներ. այնտեղ ուղղակի մարդ չէր մնա: Հիմա ո՞վ է Արցախի երաշխավորը, ո՞վ է Արցախի հայապահպանության երաշխավորը:

-Ձեր թիմի անդամը՝ ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Էդուարդ Աղաջանյան է վերջերս հայտարարել, որ Հայաստանն ի զորու չէ ապահովել Արցախի անվտանգությունը:

-Արցախի անվտանգությունն ապահովելու համար կարեւոր երկու բաղադրիչ կա՝ տնտեսական բաղադրիչը, ինչը Հայաստանի կողմից իրականացվում է ու բավական մեծ ծավալով է իրականացվում, մյուսը անվտանգության հատվածն է: Արցախի անվտանգությունը, գիտենք, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորքերին է հանձնվել: Ու չնայած Արցախի անվտանգությունը ՌԴ-ն է իրականացնում, Հայաստանն այստեղ ոչ պակաս կարեւոր դերակատարություն ունի: Ի վերջո, եռակողմ հայտարարությունը ոչ թե Արցախը, այլ Հայաստանն է ստորագրել: Հայաստանն է այսօր բանակցում, որ ռուս խաղաղապահները շարունակեն մնալ Արցախում, Հայաստանն է այսօր վարչապետ Փաշինյանի շուրթերով հայտարարում, որ մենք կողմ ենք՝ ռուս խաղաղապահներն Արցախում ոչ թե 5, 10, 20, այլ 100 տարի մնան:

-Բա՛յց...

-Բայց, ինձ թվում է, Արցախում հնչող մի շարք հարցադրումներ սխալ հասցեատիրոջ են ուղղվում, կամ ընդհանրապես չպետք է հնչեն, որովհետեւ իրականում դրանք չկան էլ:

-Այդպես էլ ստացվում է՝ Հայաստանն անվտանգային առումով ձեռքերը լվանում է Արցախից;

-Ո՞վ է ասում: Հիմա երբ ասում ենք, որ մենք համաձայն ենք, ուզում ենք՝ ռուսական խաղաղապահ զորքերը շատ ավելի երկար մնան Արցախում, ու դրա համար պատրաստ ենք բանակցել, ուրեմն դա ձեռքերը լվանա՞լ է: Իսկ մենք, այո, ուզում ենք, որ խաղաղապահները շարունակեն ներկայացված լինել Արցախում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԿՈՆՅԱԿԱՍԵՐՆԵՐԸ

Ո՞Ր ԿԱՌՈՒՅՑՆ Է ՇԱՏ ԿՈՆՅԱԿ ԳՆԵԼ

Չնայած նրան, որ Հայաստանում աղքատության մակարդակը բարձր է, ՀՀ որոշ գերատեսչություններ շարունակում են պետական միջոցների հաշվին ալկոհոլային խմիչք գնել: Այդպիսի օրինակ է ՀՀ վարչապետի աշխատակազմը, որը ղեկավարում է Արայիկ Հարությունյանը:

Նիկոլ Փաշինյանի կառավարությունը միայն հոկտեմբեր ամսին ավելի քան 1 մլն դրամ ծախսել է կոնյակ գնելու համար: Նշենք, որ այդ կոնյակները հիմնականում գնվում են պաշտոնական հանդիպումների ժամանակ նվիրելու համար:

ArmLur.am-ը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ վարչապետի աշխատակազմը ղեկավարող Արայիկ Հարությունյանը գնել է 2 հատ «Արարատ» կոնյակ՝ծախսելով ընդհանուր 178 հազար դրամ, այսինքն՝ մեկ կոնյակի համար վճարել է 89 000 դրամ: Ի դեպ, պայմանագիրը կնքվել է հոկտեմբերի 26-ին «Օլիմպիա Թրեյդ» ընկերության հետ:

Կոնյակի գնման հաջորդ պայմանագիրը կնքվել է հոկտեմբերի 27-ին: Մեզ հատնի դարձավ, որ 25 հատ կոնյակ է գնվել, որի համար պետական միջոցներից ծախսվել է մոտ 470 հազար դրամ: Այս դեպքում գնվել է 24 հատ «Նաիրի» 0.5 կոնյակ. մեկ շիշ կոնյակը գնվել է 18 հազար 550 դրամով: Մեկ շիշ «Նաիրի» 0.7 կոնյակի համար պետական միջոցներից ծախսվել է 24 հազար 650 դրամ: Այս անգամ պայմանագիր կնքվել է «Վինո Վինո» ընկերության հետ: Եւս մեկ պայմանագիր վարչապետի աշխատակազմը կնքել է հոկտեմբերի 20-ին. գնվել է 3 հատ կոնյակ՝ ընդհանուր 55 հազար 650 դրամ արժեքով: Պայմանագրի մյուս կողմը «Վինո Վինո» ընկերությունն է: Եւս մեկ շիշ կոնյակ գնվել է հոկտեմբերի 18-ին՝ 89 000 դրամով: Բացի կոնյակներից, վարչապետի աշխատակազմը գնել է նաեւ տեղական գինիներ: Օրինակ՝ հոկտեմբերի 14-ին 6 հատ գինի է գնվել. միավորի արժեքը կազմել է 16000 դրամ: Եւս 6 հատ կոնյակ գնվել է հոկտեմբերի 13-ին, ընդհանուր պայմանագրի արժեքը կազմել է 111 հազար 300 դրամ:

Նշենք, որ այս ծախսերն իրականացվում են մեր՝ հարկատուներիս հաշվին:

ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԴԱՎՈՅԱՆԸ ՀՐԱՀԱՆԳԵԼ ԷՐ

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած վարչության նիստն այդքան էլ հարթ չի անցել: ArmLur.am-ի տեղեկություններով՝ Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ, համանուն կուսակցության նորընտիր վարչության անդամ Արփի Դավոյանը վարչահրամայական տոնով Լոռու փոխմարզպետին (ենթադրաբար Գոռ Ասրյանին, որ, ինչպես Արփի Դավոյանը, Ստեփանավան քաղաքից է) հրահանգ է տվել ամեն ինչ անել, որ ՔՊ-ական չորս անձինք որեւէ կերպով իշխող քաղաքական ուժի վարչության կազմում չընդգրկվեն: «Խոսքը պատգամավորներ Մարիա Կարապետյանի, Էդուարդ Աղաջանյանի, ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի ու ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մասին է: Իր «զեմլյակներին» զգուշացրել է, որ այս չորս թեկնածուներին որեւէ դեպքում չընտրեն հանկարծ: Խոսակցությունը սեփական կուսակիցների ականջն է ընկել, ինչի մասին ձայն է բարձրացրել ՔՊ-ական մեկ այլ պատգամավոր Թագուհի Ղազարյանը, որ ասել է, թե՝ «մենք ամբողջ օրը ժողովրդավարությունից ենք խոսում, բայց այս ամենը դեմ է ժողովրդավարությանը, էսպես չի լինի»»,- մանրամասնեց իշխանամերձ մեր աղբյուրը: Նկատենք, որ գուցե նաեւ այս միջադեպն է պատճառ եղել, որ վերոնշյալ անձանցից ո՛չ Կարապետյանը, ո՛չ Աղաջանյանը վարչության կազմում չեն ընդգրկվել:

ՋԳԱԼԻ ԱՃ

2023 թվականին նախատեսվում է ապահովել համախառն ներքին արդյունքի նկատմամբ պետական պարտքի զգալի բարելավում: Այս մասին ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2023 թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման ժամանակ նշեց ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը:

«Որքան պարտքը եւ պարտքի սպասարկումը գտնվում են հուսալի միջավայրում, այնքան մեր բոլոր անելիքները միջնաժամկետ հատվածում ավելի մեծ երաշխավորվածությամբ կարող են իրականացվել այն ծավալներով, որոնք նախատեսված են: Այո, անորոշությունները շատ են, եւ այս տարվա միջավայրը դրա վկայությունն է: Մենք պետք է հաշվի առնենք բոլոր հնարավոր զարգացումները»,- նշեց Խաչատրյանը: Միեւնույն ժամանակ նախարարը նշեց, որ 2021 թվականի արդյունքներով պարտքը համախառն ներքին արդյունքի նկատմամբ գտնվում էր էապես բարձր մակարդակի վրա էր եւ կազմում էր 60,3 տոկոս, սակայն կառավարության գործունեության ծրագրի ժամանակահատվածում կառավարությունը ցանկանում է հասնել նրան, որ այդ ցուցանիշը չլինի ավելի բարձր, քան համախառն ներքին արդյունքի 50 տոկոսն է: Բյուջեի քննարկման ժամանակ նախարարը նշեց, որ 2023 թվականին պետական բյուջեով նախատեսվող պաշտպանության ոլորտի ծախսերը կազմելու են 506 միլիարդ դրամ, որը 35 տոկոսով ավելի է 2022 թվականի ծախսային ցուցանիշից: Պաշտպանության ոլորտի ծախսերը կազմելու են ՀՆԱ-ի 5 տոկոսը: Նախարարը նաեւ նշեց, որ սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերի աճը նույնպես զգալի է լինելու:

2 ՄԻԼԻԱՐԴԱՆՈՑ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը ճանապարհների վերանորոգման նպատակով ավելի քան 2 միլիարդի չափ պայմանագիր է կնքել Գորիսի նախկին քաղաքապետի ընկերության հետ: ArmLur.am-ը տեղեկացավ, որ այս տարվա հոկտեմբերի 21-ի կնքած պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 2 մլրդ 707 մլն 501 հազար 279 դրամ, որից 451 մլն 250 հազար 213 դրամը ԱԱՀ-ն է: Ի դեպ, այս տարվա իրականացվող աշխատանքների գինը կազմում է 931 մլն 808 հազար դրամ, որից միայն 155 մլն դրամը ԱԱՀ-ն է:

Ի դեպ, խոսքը «Ոսմար» ընկերության մասին է, որը պատկանում է Գորիսի նախկին քաղաքապետ Նելսոն Ոսկանյանի ընտանիքին: Նշված ընկերության բաժնետեր հանդիսանում է նաեւ Ոսկանյանի կինը եւ աներորդին: Այս ընկերությունը պետք է իրականացնի Հ-46, /Մ-2/-Տաթեւ-Աղվանի-Մ-2/ (Սյունիք) հանրապետական նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքներ:

Ավելին՝ նկատենք, որ այս ընկերության հետ պայմանագիրը կնքվել է առանց մրցույթի՝ «հրատապ մեկ անձ» ընթացակարգով: Այս ընկերությունը պետական գնումներին մասնակցում է 2015 թվականից:

ՓԱՇԻՆՅԱՆԸ՝ ՍՈՉԻՈՒՄ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանը Սոչի է մեկնել ՀՀ փոխվարչապետ Միհեր Գրիգորյանի, Անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանի, ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի եւ այլ անձանց հետ: Ընդհանուր առմամբ, Փաշինյանի պատվիրակության կազմում 16 հոգի է ընդգրկված, այդ թվում՝ պաշտոնյաներ աշխատակազմերից ներկայացուցիչներ:

Հայաստանի Հանրապետության կառավարական պատվիրակության կազմում ընդգրկված է նաեւ Ռուսաստանի Դաշնությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Վաղարշակ Հարությունյանը:

Երեկ ՀՀ Ազգային ժողովում մեկնարկել է 2023 թվականի պետական բյուջեի նախագծի կատարողականի քննարկումները: Երեկ առավոտյան, ըստ ավանդույթի, պետք է քննարկումներին նաեւ մասնակցեր ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, սակայն երեկ նա չի մասնակցել եւ չի ներկայացրել բյուջեի նախագծի կատարողականը, քանի որ առավոտյան մեկնել է Սոչի:

Եվ, ահա, ArmLur.am-ը տեղեկացավ, որ Նիկոլ Փաշինյանն անձամբ չորեքշաբթի օրն է գնալու Ազգային ժողով եւ մասնակցի բյուջեի նախագծի քննարկումներին: Նշենք, որ այդ օրը խորհրդարանում նախատեսված է Պետահրավական եւ Ֆինանսավարկային հանձնաժողովների համատեղ նիստ, եւ իրավապահ համակարգի ներկայացուցիչներն են գալու խորհրդարան: Հենց այդ օրն էլ նա կլինի խորհրդարանում:

ՉՆԱՅԱԾ ԽՈՍՏՄԱՆԸ

ԱՐՑԱԽԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԱՎԵԼԱՆԱ

ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի նախագծով նախատեսվում է Արցախի Հանրապետությանը տրամադրել աջակցություն՝ 144 մլրդ դրամի չափով: Նկատենք՝ այս իշխանությունների կողմից Արցախին օգնելու թեման մշտապես է ներկայացվել՝ հաճախ մանիպուլյատիվ փաստեր պարունակելով:

Օրինակ՝ 2022 թվականի հուլիսի 15-ին Ազգային ժողովում վարչապետ Նիկոլ Փաշինյանը 2021 թվականի պետբյուջեի կատարողականի քննարկման ժամանակ իր ելույթում անդրադարձավ Հայաստանի Հանրապետությունից Արցախին տրվող օգնությանը եւ հենց այդ ժամանակ էլ արեց մի շարք մանիպուլյատիվ պնդումներ: Փաշինյանը հայտարարեց, որ Արցախի բյուջեն երբեք ավելի մեծ չի եղել, քան այժմ է, եւ դա՝ շնորհիվ Հայաստանի կառավարության աջակցության: Ըստ Փաշինյանի՝ 2021թ. Հայաստանի կառավարության բյուջետային աջակցությունը Արցախին աննախադեպ է իր մեծությամբ:

Փաշինյանը հավելեց նաեւ, որ 2021 թվականին Արցախի բյուջեի 73 տոկոսը վճարել է ՀՀ կառավարությունը, եւ որ 2021-ին Հայաստանի կառավարության աջակցությունն ավելին է եղել, քան 2019 թվականի Արցախի ամբողջ բյուջեն:

Նախ՝ ընդգծենք, որ յուրաքանչյուր տարի Հայաստանից Արցախին տրամադրվող աջակցությունը, ըստ էության, ոչ թե աջակցություն է, այլ բյուջետային վարկ, պարզապես՝ շատ ցածր (0.01%) տոկոսադրույքով: Վարչապետի հայտարարությունն այն մասին, որ Հայաստանի կառավարությունը երբեք այսքան մեծ աջակցություն չի ցուցաբերել Արցախին, բացարձակ իմաստով ճիշտ է, սակայն տրամադրվող աջակցության ծավալների մեծացումը 2020-ի պատերազմից հետո նպատակ ունի մեղմել Արցախում պատերազմից հետո սկսված ծանր սոցիալական պայմանները, այլ կերպ ասած՝ պատերազմի հետեւանքները: 2018 թվականին Հայաստանից Արցախին տրամադրվող աջակցությունը կազմում էր 51,4 մլրդ, 2019-ին՝57,8 մլրդ, 2020 թվականին՝ 64,9 մլրդ:

2021 թվականին Արցախի բյուջեով նախատեսված Հայաստանից ստացվելիք բյուջետային վարկը կազմում էր 64,7 մլրդ, այսինքն՝ ավելի քիչ, քան դրան նախորդող տարում էր: Վարչապետի հնչեցրած թվերը ներառում են ինչպես բյուջետային վարկերը, այնպես էլ տարբեր սոցիալական խնդիրներին ուղղված գումարները (կոմունալ վարձավճարների, կեցության, աշխատավարձերի վճարման եւ այլնի տեսքով):

Հետաքրքիր են նաեւ ոչ միայն բացարձակ թվերը, այլեւ Արցախի բյուջեի եւ Հայաստանի աջակցության հարաբերակցության մասին Փաշինյանի համեմատությունը. «2021 թվականին Արցախի բյուջեի 73 տոկոսը վճարել է ՀՀ կառավարությունը, եւ 2021թ. Հայաստանի կառավարության աջակցությունն ավելին է եղել, քան 2019 թվականի Արցախի ամբողջ բյուջեն»:

Իսկ մինչ պատերազմն Արցախի բյուջեի մոտ կեսն էր տրամադրվում Հայաստանի կողմից: Եվ ինչպես նշեցինք, նախորդ տարի հատկացված գումարների մի մասը ոչ թե բյուջետային վարկի շրջանակներում են տրվել, այլ տարբեր սոցիալական ծրագրերի միջոցով: Սա եւս ապացուցում է, որ պատերազմից հետո Հայաստանից տրամադրվող գումարների նման աճը կապված է բացառապես պատերազմի հետեւանքների վերացման հետ:

Հաջորդ տարվա համար դեռ միայն 144 մլրդ դրամի աջակցության մասին է խոսք գնում, որի մասին հիշատակված է հենց բյուջեի նախագծում:

ՀՀ ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը երեկ այս հարցով բյուջեի քննարկման ժամանակ նշեց, որ ֆինանսական միջոցների կարիքները հիմնականում վերաբերում են բնակարանային շինարարությանը:

«Բնակարանային շինարարությունը Արցախում իրականացվում է ՀՀ կառավարության մեծ աջակությամբ: Հաջորդ տրվա ընթացքում 144 մլրդ դրամ է նախատեսված, բայց եթե ընթացքում ի հայտ գան այնպիսի խնդիրներ, որոնք պահանջում են Հայաստանի կառավարության աջակցությունը, ըստ բովանդակության կքննարկվեն եւ կստանան լուծումներ, ինչպես եղել է մշտապես»,- ասաց նա:

Տիգրան Խաչատրյանը ընդգծեց, որ ֆինանսավորումը նախատեսված է այն ծավալով, որ որեւէ էական խնդիրներ չառաջանան:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԱԽԱԳԾԻ ԱՐԺԵՔԸ

2023 թվականին նախատեսվում է Փրկարար ծառայության 15 ենթակա տորաբաժանումների համար ձեռք բերել 49 հրշեջ մեքենա:

Աժ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում 2023 թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման ժամանակ այս մասին ասաց արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ Արտյուշ Գրիգորյանը:

«Նախագծի արժեքը կազմում է 3 միլիարդ 740 միլիոն դրամ»,- ասաց Գրիգորյանը:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ՝ ՀԱՆԴԻՊՈՒՄԻՑ

«Ղարաբաղի հարցում Երեւանի համար ընդունելի են Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների հաստատման ռուսական նախագծի առաջարկած մոտեցումները: Սահմանազատման աշխատանքներից առաջ նախ անհրաժեշտ է ամրացնել անվտանգությունը Ադրբեջանի եւ Հայաստանի սահմանին»,- Պուտինի հետ հանդիպման ժամանակ ասաց ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Նա նաեւ ընդգծեց, որ Հայաստանի տարածքով անցնող հաղորդակցությունները պետք է լինեն պաշտոնական Երեւանի ենթակայության տակ:

«Հայաստանն ակնկալում է Ռուսաստանի հստակ դիրքորոշումը Հայաստանի սուվերեն տարածքից ադրբեջանական զինված ուժերի դուրս բերման հարցում»,- հավելեց վարչապետը:

ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն էլ իր խոսքում նշեց. «Անհրաժեշտ է համաձայնության գալ բոլոր հարցերի շուրջ: Մենք միշտ ելնում ենք նրանից, որ Հայաստանը մեր ռազմավարական գործընկերն ու դաշնակիցն է: Հուսով եմ՝ մենք կարող ենք առաջընթաց քայլեր ձեռնարկել կարգավորման ուղղությամբ»:

ՓԱՅԼԱՆԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանը հոկտեմբերի 31-ին ընդունել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի հայազգի պատգամավոր Կարո Փայլանին:

Հանդիպմանը քննարկվել են ադրբեջանական վերջին ագրեսիայի հետեւանքները: Ջրույց է ընթացել Հայաստան-Թուրքիա սահմանների բացման շուրջ: Կարո Փայլանի խոսքով՝ սահմանների բացմանն առնչվող քննարկումների վերաբերյալ Թուրքիայում ապրողների լայն շրջանակում տեղեկատվության պակաս կա: Նա ՀՀ ԱԺ նախագահին ներկայացրել է նաեւ իր տպավորությունները եւ դիտարկումները հայ-թուրքական գործընթացի առնչությամբ:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎՆ ԱՃԵԼ Է

Ընթացիկ տարվա 9 ամիսներին Հայաստանում հանցագործությունների եւ իրավախախտումների թիվն աճել է 27 տոկոսով կամ մոտ 5,6 հազար դեպքով: Այս մասին Ազգային ժողովում հոկտեմբերի 31-ին՝ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, մշտական խորհրդարանական հանձնաժողովների համատեղ նիստում ասաց փոխոստիկանապետ Արա Ֆիդանյանը:

Նրա խոսքով՝ այս ամենը լիովին բացատրելի է: Այսպիսով, ուժի մեջ են մտել պատիժները վարորդների համար, որոնք տուգանային միավորների ավելցուկ են հավաքել ճանապարհային երթեւեկության կանոնների խախտման համար:

«Այս դեպքում 6 ամսով նրանք զրկվում են վարորդական իրավունքից, սակայն որոշ դեպքերում իրավունքից զրկված վարորդները նորից նստում են ղեկին՝ թույլ տալով նոր իրավախախտումներ: Մյուս պատճառը թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտման աճն է:

Այսպիսով, 2022 թվականը հայտարարվեց այս երեւույթի դեմ պայքարի տարի: Արդյունքում թմրամիջոցների մաքսանենգության եւ վաճառքի քրեական հետապնդումն ավելի համակարգված էր: Մասնավորապես, 2022 թվականի 9 ամիսների ընթացքում գրանցվել է 1057 նման հանցագործություն: Համեմատության համար՝նախորդ տարվա նույն ժամանակահատվածում հայտնաբերվել է 617 դեպք»,- պարզաբանեց Ֆիդանյանը:

Հիշեցնենք նաեւ, որ Հայաստանի ոստիկանությանը նախատեսվում է հատկացնել շուրջ 76,2 մլրդ դրամ. այս մասին Ազգային ժողովում հոկտեմբերի 31-ին՝ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, մշտական խորհրդարանական հանձնաժողովների համատեղ նիստում ասաց փոխոստիկանապետ Արա Ֆիդանյանը:

Ֆիդանյանը, մասնավորապես, նշեց, որ 2022 թվականին իրավապահների կարիքների համար հատկացվել է 66,6 մլրդ դրամ: «Այսինքն՝ տարբերությունը կկազմի մոտ 9,6 մլրդ դրամ կամ 14,4 տոկոս»,- ասաց փոխոստիկանապետը:

Նա նշեց նաեւ, որ ոստիկանությանը վերաբերող ոլորտներում ծրագրերի համար հատկացումները կազմում են 74 մլրդ դրամ: Սա, ընթացիկ տարվա 65 մլրդ դրամի համեմատ, 9 մլրդ դրամով ավելի է (15,2 տոկոս):

Խոսքը, մասնավորապես, վերաբերում է կազմակերպական-իրավական գործունեությանը, ծառայությունների մատուցմանը, հանրային անվտանգության ապահովմանը եւ տարբեր տեսակի իրավախախտումների դեմ պայքարին:

ԼՈՒՐԵՐ

ՊԵՏԱԿԱՆ ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅՈՒՆ

2022թ. մայիսի 25-ին Արցախի ազգային անվտանգության ծառայության կողմից հարուցվել էր քրեական գործ Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության աշխատակցի կողմից պետական դավաճանություն կատարելու ենթադրյալ դեպքի առթիվ:

Արցախի դատախազությունից հայտնում են, որ գործով իրականացված նախաքննության արդյունքների հիման վրա Արցախի քննչական կոմիտեի քննիչի կողմից Արցախի Հանրապետության քաղաքացի Ա.Հ.-ն որպես մեղադրյալ է ներգրավվել Արցախի քրեական օրենսգրքի 310-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ենթադրյալ հանցագործության կատարման համար, քրեական գործը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան: Գործի դատական քննության արդյունքների մասին կհայտնվի լրացուցիչ:

ՄԵՂԱԴՐԱՆՔՆԵՐ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Դավիթ Դավթյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 10:40-ի սահմաններում, այցելել է Վանաձոր քաղաքի Գարեգին Նժդեհի 2/42 հասցեում գտնվող «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲ ընկերություն եւ ընկերության տնօրեն Վահագն Սեյրանի Մկրտչյանի աշխատասենյակում հանդիպել վերջինիս: Զրույցի ընթացքում Դավիթ Դավթյանը Վահագն Մկրտչյանին մեղադրել է ընկերության աշխատանքները վատ կազմակերպելու մեջ, դժգոհություն հայտնել բժշկական կենտրոնի աշխատակիցների գործունեությունից, նրանց մեղադրել նախկինում «COVID-19» համավարակով վարակված մորը ոչ պատշաճ բուժօգնություն ցուցաբերելու եւ նրան հաշմանդամ դարձնելու համար, ապա հնչեցրել բռնություն գործադրելու սպառնալիքներ առ այն, որ նշված պատճառով կարող է սպանել բժշկական կենտրոնի 5-10 բուժաշխատողների, կարող է սպանել նաեւ տնօրեն Վահագն Մկրտչյանին, որպիսի քայլին չի ցանկանում դիմել՝ հաշվի առնելով, որ վերջինս ունի կին եւ երեխաներ՝ այդկերպ Վահագն Մկրտչյանի մոտ առաջացնելով վախի եւ խուճապի մթնոլորտ, որից անմիջապես հետո Վահագն Մկրտչյանից պահանջել է հավաքել եւ հաջորդ օրն իր կողմից մատնանշված անձին՝ «իր ուղարկած մարդուն» փոխանցել 20.000.000 ՀՀ դրամ գումար՝ Վահագն Մկրտչյանից կատարելով առանձնապես խոշոր չափերով գումարի շորթում:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿԵՂԾ ԱՐԱՋԱՆԳ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Ջեմս Սարգսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա անորոշ շրջանակի անձանց մոտ լրջագույն անհանգստություն, տագնապ, վախ առաջացնելու, հասարակական անվտանգությունը վտանգելու նպատակով ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ է տարածել: Վերջինս կալանավորվել ԱԱԾ-ի կողմից, եւ գործը ուղարկվել է դատարան:

ԿՐԱԿՈՑՆԵՐ՝ ԳՈՐԻՍՈՒՄ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ երեկ աղմկահարույց կրակոցներ են եղել Գորիս քաղաքում: Ջիված մի խումբ տղաներ վեճ են ունեցել՝ փորձելով ինչ-որ հարցեր լուծել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ կրակոցների կիզակետում է եղել Գորիսի քաղաքապետի հորեղբոր թոռը՝ Ալեն Առուշանյանը:

Ավելին, ArmLur.am-ի տեղեկություններով՝ զինված խմբի տղաներից մեկը վերցրել է զենքը եւ կրակել Առուշ Առուշանյանի հորեղբոր տղայի վրա:

Ավելի ուշ ՀՀ քննչական կոմիտեի Սյունիքի մարզային քննչական վարչությունից ArmLur.am-ը տեղեկացավ, որ Գորիսի քննչական բաժնում իրականացվում են քննչական եւ դատավարական այլ գործողություններ՝ Գորիս քաղաքի 29-ամյա բնակչին ծանր մարմնական վնաս պատճառելու դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

Երիտասարդին «ձախ ազդրի եւ աջ զստային շրջանի հրազենային վիրավորում» ախտորոշմամբ հիվանդանոց ընդունելու մասին հաղորդումը ստացվել է 2022թ.-ի հոկտեմբերի 30-ին՝ ժամը 18:25-ին:

Ահազանգի հիման վրա ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 2022թ.-ի հոկտեմբերի 30-ին՝ժամը 17:30-ի սահմաններում, Գորիսի «Նոր զանգեր» կոչվող տեղանքում անձնական հարցերի շուրջ վիճաբանություն է առաջացել հիշյալ երիտասարդի եւ 25-ամյա համաքաղաքացու միջեւ, որի ընթացքում վերջինս իր մոտ գտնվող հրազենով կրակել է 29-ամյա երիտասարդին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ: Նույն օրը՝ ժամը 19:35-ին, 25-ամյա երիտասարդը ներկայացել է ՀՀ ոստիկանության Գորիսի բաժին, ներկայացրել է իր անվամբ հաշվառված «ՄՌ 155» մոդելի որսորդական ողորկափող հրազենը եւ հայտարարել, որ այդ հրազենով կրակել է համաքաղաքացու ուղղությամբ: 25-ամյա երիտասարդը ձերբակալվել է՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով: Նախաքննությունը շարունակվում է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

4 ԱՆՁ ՄԱՀԱՑԵԼ Է

Հոկտեմբերի 25-ին՝ ժամը 20:30-ի սահմաններում, Օշական-Աշտարակ ճանապարհին «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենան դուրս էր եկել երթեւեկելի գոտուց եւ բախվել էլեկտրասյանը, ինչի հետեւանքով մեքենայում առաջացել էր հրդեհ: 16-ամյա վարորդ Էդուարդ Գրիգորյանը եւ ուղեւորները՝ 16-ամյա Միհրան Միրիջանյանն ու 17-ամյա Կարեն Պողոսյանը, մահացել էին, իսկ 16-ամյա ուղեւոր Ալբերտ Ներսիսյանը այրվածքներով տեղափոխվել էր հիվանդանոց:

Հոկտեմբերի 29-ին հիվանդանոցից հաղորդում է ստացվել, որ 16-ամյա ուղեւոր Ալբերտ Ներսիսյանը մահացել է: Նախաքննությունը շարունակվում է:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 28-ից 31-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 116 դեպք, որոնցից 5-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՓԱՇԻՆՅԱՆԻ ՆԿԱՐՈՎ ԳՈՐԳ

Հոկտեմբերի 27-ին՝ Տավուշի մարզ այցի ժամանակ, վարչապետի տիկինը՝ Աննա Հակոբյանը, եղել է Նոյեմբերյան խոշորացված համայնքի Ջուջևան գյուղի բնակիչ, կենսաթոշակառու ուսուցչուհի, գորգագործ Անուշ Ալեքսանյանի տանը: Վերջինս Աննա Հակոբյանին է նվիրել Նիկոլ Փաշինանի պատկերով, «Դուխով» գրառումով փոքր գորգ: Անուշ Ալեքսանյանը խորհրդային ժամանակ հայոց լեզու եւ գրականություն է սովորեցրել համագյուղացի, իրենց դպրոցի աշակերտ, Ադրբեջանի փոխվարչապետ Շահին Մուստաֆաեւին, որը, գերազանցությամբ ավարտելով Ջուջևանի ութամյա, ապա՝ Նոյեմբերյանի թիվ 2 միջնակարգ դպրոցները, երկու տարի սովորել է Երեւանի ժողովրդական տնտեսության ինստիտուտում, 1988 թվականին տեղափոխվել Ադրբեջան: Նա հիմա սահմանազատման հարցով հայ-ադրբեջանական հանձնաժողովի համանախագահն է:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԸ ՉԻ ՄԱՄՆԱԿՑԵԼ

Հոկտեմբերի 27-ին Դիլիջան քաղաքում տեղի է ունեցել հիմնանորոգված արվեստի պետական քոլեջի բացման հանդիսավոր միջոցառում: Հայ օգնության ֆոնդի Հայաստանյան գրասենյակը ամերիկահայ բարերարներ Հրաչ եւ Սյուզան Թուֆայանների ֆինանսավորմամբ 2019 թվականին հիմնանորոգման ու բարեկարգման մեծածավալ աշխատանքներ է իրականացրել Դիլիջանի արվեստի պետական քոլեջում: Շինարարական աշխատանքներից բացի, հիմնադրամը քոլեջին է նվիրաբերել երաժշտական գործիքներ ու համակարգիչներ: Կորոնավիրուսային համաճարակի պատճառով հնարավոր չի եղել ամբողջովին հիմնանորոգված քոլեջի բացման արարողությունը կազմակերպել ժամանակին, միջոցառումը հետաձգվել է: Հանդիսավոր արարողության ժամանակ ՀՕՖ-ի Հայաստանի մասնաճյուղի տնօրեն Բագրատ Սարգսյանը դրվատել է քոլեջի շենքի հիմնանորոգման գործի բարերարներին, կատարած որակյալ աշխատանքի համար շնորհակալություն հայտնել «Կանակա» շինարարական կազմակերպությանը: Միջոցառման ավարտին ներկայացվել է համերգային ծրագիր, որով հանդես են եկել Դիլիջանի արվեստի քոլեջի սաները: Դիլիջան խոշոր համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանը, նրա տեղակալ Արամ Բազինյանը, համայնքապետարանի այլ պաշտոնյաներ չեն մասնակցել իրենց քաղաքի հիմնանորոգված քոլեջի բացման միջոցառմանը: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքում, Դիլիջան համայնքի անցուդարձից զատ, ներկայացվում են Դիլիջան խոշոր համայնքի հետ կապ չունեցող լուրեր, Դիլիջանի կյանքին չառնչվող իրադարձությունների մասին տեղեկատվություն, սակայն Դիլիջան համայնքապետարանի պաշտոնական, ինտերնետային կայքում ոչ մի տող չկա Դիլիջան քաղաքի արվեստի պետական քոլեջում կայացած վերոհիշյալ հանդիսավոր միջոցառման մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

2023 Թ. ՊԵՏԲՅՈՒՋԵ

ԹԻՐԱԽԸ՝ 7 ՏՈԿՈՍ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃ

«Ինչպես նախորդ տարվա բյուջեի նախագծում, այս տարի եւս նախագիծը կազմվել է այն սկզբունքով, որ պետք է առաջին հերթին երաշխավորվի մակրոտնտեսական կայունություն: Դա նշանակում է, որ մենք պետք է էականորեն, ինչպես եւ կառավարության գործունեության ծրագիրն է նախատեսում, ավելացնենք սոցիալական եկամուտները, մասնավորապես՝ հարկային եկամուտները, որովհետեւ դրանք են այն երաշխիքները, որոնք կաղահովեն միջնաժամկետ հատվածում կառավարության ծրագրերի հուսալի ֆինանսավորում»,- նշել է ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը:

Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում եւ դրանց համատեղ նիստերում հոկտեմբերի 31-ին մեկնարկել են «ՀՀ 2023 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումները: Օրենքի նախագծի մշակման սկզբունքները, նախագծի հիմքում դրված հիմնական մակրոտնտեսական ցուցանիշները (գնաճի սցենարը, բյուջեի դեֆիցիտը եւ նրա ծածկույթը, արտաքին եւ ներքին պարտքը), եկամուտների ձեւավորումը (հարկային եւ մաքսային քաղաքականությունը), բյուջեի ծախսերի կառուցվածքը եւ ծախսային քաղաքականությունը քննարկվել են Ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովի նիստում, որը նախագահել է Գեւորգ Պապոյանը:

Ֆինանսների նախարարի խոսքով՝ 2023 թ. համար որպես հիմնական նպատակադրում սահմանվել է 7 տոկոս տնտեսական աճի ծրագրային թիրախը, եւ այդ նպատակով կավելացվեն կապիտալ ծախսերը: «Պետական պարտքը մենք նախատեսել ենք, որ 2022 թ. 60,3 մակարդակից կառավարության ծրագրային ժամանակահատվածում պետք է նվազի 50 տոկոսը չգերազանցող մակարդակի»,- նշել է նա:

Ըստ Տիգրան Խաչատրյանի՝ 2023 թ. համար կառավարությունը նախատեսել է, որ պետական բյուջեի դեֆիցիտը համախառն ներքին արդյունքի նկատմամբ պետք է գտնվի 3,1 տոկոսի սահմաններում. դա այն ցուցանիշն է, որն արտացոլում է, թե պարտքային նոր միջոցներ ներգրավվելով՝ որքան ծախսեր պետք է կատարվեն:

2023 թ. պետական բյուջեն առանձնահատուկ է նրանով, որ կապիտալ ծախսերը լինելու են էապես աճող, դրանց հանրագումարը սահմանված է 548 մլրդ դրամի չափ կամ 49 տոկոսով կգերազանցեն 2022 թ. ճշտված բյուջեով սահմանված կապիտալ ծախսերի մակարդակը: Կապիտալ ծախսերը կհասնեն համախառն ներքին արդյունքի 5,9 տոկոսի, որը 2022 թ. նկատմամբ ավելի է 1,5 տոկոսով:

2023 թ. կապիտալ ծախսի զգալի մասն ուղղվելու է պաշտպանության եւ անվտանգային ենթակառուցվածքների ֆինանսավորմանը:

2023 թ. պաշտպանության ոլորտի ծախսերը կազմելու են 506 մլրդ դրամ, դրանք 35 տոկոսով գերազանցելու են 2022 թ. ճշտված բյուջեով սահմանված ծախսային ցուցանիշները:

Սոցիալական պաշտպանական ոլորտին ուղղվող ծախսերի աճը եւս զգալի է լինելու: Դրանք 2023 թ. կկազմեն 648 մլրդ դրամ, 10 տոկոսով կգերազանցեն 2022 թ. ճշտված բյուջեով սահմանված սոցիալական ոլորտին ուղղվող ծախսերը եւ կապահովվեն համախառն ներքին արդյունքի նկատմամբ 7 տոկոս մակարդակ՝ հարաբերական իմաստով պահպանելով 2022 թ. ցուցանիշը:

Կրթության ոլորտի ծախսերը կկազմեն 209 մլրդ դրամ, 12 տոկոսով ավելի, քան՝ 2022 թ.: Առողջապահության ոլորտի ծախսերը կկազմեն 149 մլրդ դրամ, որը 4 տոկոսով ավելի է 2022 թ. նկատմամբ:

«Տնտեսական աճի տեսանկյունից 6 ամսում ունենալով տնտեսական աճ՝ կարող ենք արձանագրել, որ առավել մեծ չափով դրանք կրել են ծառայությունների աճի ազդեցություն. մեծ են եղել շինարարության եւ արդյունաբերության ազդեցությունները: Պահանջարկի տեսանկյունից դրանք արտահանման ծավալների եւ սպառման աճն է»,- նշել է ֆինանսների նախարարը:

Նախարարի խոսքով՝ ՀՀ-ում տնտեսական զարգացումների վրա զգալի ազդում է նաեւ պղնձի միջազգային գինը. «Երեք տարվա կտրվածքով գները նվազում են: Այս տարի կանխատեսվում է, որ 8.900 դոլարի սահմաններում կլինի, իսկ հաջորդ տարի՝ 8.000 դոլարի: Նավթի միջազգային գները եւս, ըստ կանխատեսումների, նվազելու են»,- նշել է նախարարը: Ինչ վերաբերում է պարենի միջազգային շուկայի գներին, ապա առաջիկա տարում գների որոշակի նվազում է նկատվում՝ 5,8 տոկոսով ավելի ցածր, քան 2022 թ.:

Գալիք տարվա համար կանխատեսվում է 7 տոկոս տնտեսական աճ, եւ դա է բոլոր հարկաբյուջետային ցուցանիշների հաշվարկի հիմքում: 2023 թ. պետական բյուջեի հարկային եկամուտները կկազմեն 2 տրիլիոն 204 մլրդ դրամ, որը ՀՆԱ-ի նկատմամբ կկազմի 23,7 տոկոս:

2023 թ. համար դեֆիցիտը նախատեսվում է 289 մլրդ դրամի չափ, ծախսերը կկազմեն մոտ 2,6 տրիլիոն դրամ:

Կառավարության պարտքը, ըստ Տիգրան Խաչատրյանի, անվանական մեծությամբ կկազմի մոտ 4 տրիլիոն 232 մլրդ դրամ, իսկ 2023 թ. կկազմի 4 տրիլիոն 625 մլրդ դրամ:

ԱԺ նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանն էլ իր հարցադրումներից մեկով տեղեկացրել է, որ բավականին շատ բողոքներ է ստանում՝ բանկային ոլորտի միջնորդավճարների հետ կապված, եւ դրա վերաբերյալ ցանկացել է լսել ֆինանսների նախարարի կարծիքը եւ կառավարության գնահատականը:

Ֆինանսների նախարարը նշել է, որ խնդիրը վերաբերում է ոչ թե դրամական փոխանցումներին, այլ կանխիկացման համակարգում պահումներին, որն ունի իր պատճառները: Ըստ Տիգրան Խաչատրյանի՝ Կենտրոնական բանկի պարզաբանումներով՝ դա անհրաժեշտ եւ տրամաբանական է:

Կենտրոնական բանկի նախագահ Մարտին Գալստյանի խոսքով՝ ազգային արժույթի կանխիկացման դեպքում որեւէ սակագին չի գործում, սակագինը գործում է օտարերկրյա արժույթների վրա, որոնց նկատմամբ Հայաստանի բանկային համակարգն ունի հասանելիության խնդիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչությունը շարունակում է աննախադեպ գերծանրաբեռնված աշխատել»,- ԱԺ մշտական հանձնաժողովների համատեղ նիստում՝ 2023թ. պետական բյուջեի մասին օրենքի նախագծի քննարկման ժամանակ, ասաց ոստիկանության պետի տեղակալ Արա Ֆիդանյանը:

«2022 թվականի 9 ամիսների ընթացքում քաղաքացիներին է հանձնվել 15 հազար 396 կենսաչափական կողմնորոշիչներ պարունակող անձնագիր (նախորդ տարվա համեմատ աճը կազմել է 46.5 տոկոս), ինչպես նաեւ 146 հազար 565 նույնականացման քարտ (նախորդ տարվա համեմատ 2.5 անգամ ավելի): ՀՀ քաղաքացիներին տրամադրվել է նաեւ 386 հազար 875 ՀՀ քաղաքացու անձնագիր. նախորդ տարվա համեմատ աճը կազմում է 29.7 տոկոսով»,- ասաց Ֆիդանյանը:

Ոստիկանության պետի տեղակալի խոսքով՝ ՀՀ նախագահի հրամանագրով՝ Հայաստանի քաղաքացիություն է շնորհվել 11 հազար 669 անձի:

«Քաղաքացիություն ձեռք բերելու, քաղաքացիությունից հրաժարվելու կապակցությամբ կազմվել ու ընթացք է տրվել 21 հազար 113 գործի», - նշեց Ֆիդանյանը:

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 47 ՃՏՊ. 2 մարդ զոհվել է, 72-ը ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՊԱՐԳԵՎԱՎՃԱՐՆԵՐԸ ԿԿՐՃԱՏՎԵՆ

Հայաստանում պետական ծառայողների աշխատավարձերը կբարձրացվեն, իսկ պարգեւավճարները՝ կկրճատվեն. այս մասին Ազգային ժողովում մշտական խորհրդարանական հանձնաժողովների համատեղ նիստում հոկտեմբերի 31-ին՝ 2023 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, ասաց ֆինանսների նախարար Տիգրան Խաչատրյանը:

Ֆինանսների նախարարության ղեկավարի խոսքով՝ բոլոր գերատեսչություններում պարգեւավճարների ֆոնդը մինչեւ 2019 թվականը կազմել է աշխատավարձի ֆոնդի մոտ 10 տոկոսը, ընդ որում՝ 2019 թվականին այս 10 %-ին ավելացրել են եւս 20 տոկոս: Այսպիսով, կառավարությունը ցանկանում է պարգեւավճարների ֆոնդը 30 տոկոսից իջեցնել 16 տոկոսի: «Թե ինչ սկզբունքով են բաշխվելու պարգեւները, կորոշվի մինչեւ ընթացիկ տարվա վերջը»,- ասաց Խաչատրյանը:

Սակայն ինչպես նշեց կառավարության ներկայացուցիչը, այս հարցի վերաբերյալ վերջնական որոշում առայժմ չկա: Հայտնի է միայն, որ բազային դրույքաչափը, որով հաշվարկվում են պաշտոնյաների աշխատավարձերը՝ կախված պաշտոնից եւ ստաժից, 66 140-ից կբարձրացվի մինչեւ 82 000 դրամ: Աշխատավարձերի բարձրացմանը կուղղվի նաեւ պարգեւավճարների ֆոնդի մի մասը:

«Ընդհանուր առմամբ, 2023 թվականին պետական ծառայողների աշխատավարձերի ֆոնդը կավելացվի 21 մլրդ դրամով, այսինքն՝ 7-8 տոկոսով»,- պարզաբանեց նախարարը:

ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հոկտեմբերի 28-ին Հայկական Կարմիր խաչի ընկերության կողմից Լաչինի միջանցքի համայնքներից Հայաստան տեղափոխված 104 ընտանիքի՝ 299 անձի, տրամադրվել է միանվագ դրամական աջակցություն: Շահառու ընտանիքներին տրամադրվել է 75,000-ից 181,000 ՀՀ դրամ՝ ընտանիքի անդամների թվի հաշվարկով:

Հայկական Կարմիր խաչի ընկերությունից հայտնում են, որ համապատասխանաբար 1 անձից բաղկացած ընտանիքին տրվել է 75,000 ՀՀ դրամ, 2 անձից բաղկացած ընտանիքին՝ 107,500 ՀՀ դրամ, 3 անձից բաղկացած ընտանիքին ՝ 132,000 ՀՀ դրամ, 4 անձից բաղկացած ընտանիքին՝ 156,500 ՀՀ դրամ, 5 եւ ավելի անդամից բաղկացած ընտանիքներին՝ 181,000 ՀՀ դրամ: Ընդանուր առմամբ տրամադրվել է 12 720 500 ՀՀ դրամի աջակցություն:

ԱՅՑ

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովինար գյուղում ՀՀ կառավարության կողմից 2022 թվականին իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում ընթանում են մանկապարտեզի խաղահրապարակի եւ սեղտիկ հորի, 2-րդ թաղամասի 6-րդ փողոցի լուսավորության ցանցի, ներհամայնքային ոռոգման համակարգերի կառուցման, ներհամայնքային փողոցների ասֆալտապատման եւ մշակույթի կենտրոնի հիմնանորոգման աշխատանքներ: Այդ մասին ասել է Գեղարքունիքի մարզպետ Կարեն Մարգսյանը: Նա նաեւ նշել է. «Սուբվենցիոն ծրագրերի ընթացքին ծանոթանալու նպատակով այցելել եմ Ծովինարի շինհրապարակներ:

Ծովինարի մանկապարտեզի հիմնանորոգումը մոտենում է ավարտական փուլին: Այն սկսվել է 2019 թվականից եւ ընթացել մի քանի փուլերով, ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում:

2019 թվականին Ծովինարի մանկապարտեզի հիմնանորոգմանը հատկացվել է 28,8 միլիոն, 2020 թվականին՝ 40 միլիոն, 2021 թվականին՝ 28,5 միլիոն, 2022 թվականին՝ 61,5 միլիոն դրամ: Նախորդ երեք տարիների ընթացքում ավարտին են հասցվել հիմնանորոգման, ինչպես նաեւ ջեռուցման համակարգի կառուցման աշխատանքները, իսկ այս տարվա տրամադրած միջոցներով այժմ ընթանում են բակային տարածքի բարեկարգման, խաղահրապարակի եւ սեպտիկ հորի կառուցման աշխատանքները, որոնք ավարտին կհասցվեն նոյեմբեր ամսվա ընթացքում:

Ծովինարի մանկապարտեզի հիմնանորոգման 2022 թվականի ավարտական փուլի համար տրամադրվել է 61,5 միլիոն դրամ, որի 75 տոկոսը հատկացրել է ՀՀ կառավարությունը, 25 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Շինարարական աշխատանքների ավարտից եւ գույքի ձեռքբերումից հետո Ծովինարի մանկապարտեզն իր դռները կբացի գյուղի նախադպրոցական տարիքի 100 երեխաների առջեւ: Ծովինարի մանկապարտեզի գործունեությունը դադարեցվել է 2005 թվականից շենքային անբավարար պայմանների պատճառով: Վերջին չորս տարիների ընթացքում շենքի հիմնանորոգումն ընթացել է անխափան: Այս տարի հատկացված 61,5 միլիոն դրամից գույքի ձեռքբերմանն ուղղվում է 20 միլիոն դրամ, իսկ մնացած գումարը ծախսվում է տարածքի բարեկարգման, խաղահրապարակի եւ սեպտիկ հորի կառուցման ուղղությամբ: Շինարարական աշխատանքներն ավարտվել են մոտ 60 տոկոսով: Ծովինարի ներհամայքնային փողոցների ասֆալտապատման ծրագրի իրականացման պայմանագրային արժեքը կազմում է 101 միլիոն դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսվում է ասֆալտապատմամբ հիմանորոգել 1-ին թաղամասի 9-րդ փողոցը եւ 2դ թաղամասի 6-դ փողոցը՝ շուրջ 1200 գծամետր երկարությամբ եւ 5 հազար քառակուսի մետր մակերեսով: 2022 թվականի հոկտեմբերի 25-ի դրությամբ ասֆալտապատման աշխատանքներն ավարտվել են 1-ին թաղամասի 9-դ փողոցում, իսկ 2-դ թաղամասի 6-դ փողոցում ընթանում են հողային հարթեցման եւ այլ կարգի նախապատրաստական աշխատանքներ, որոնց առաջիկա օրերին կհաջորդի ասֆալտապատումը: Շինարարական աշխատանքները նախատեսված է ավարտել մինչեւ տարեվերջ: Ծովինարի 2-դ թաղամասի 6-դ փողոցի լուսավորության ցանցի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 6 միլիոն 562 հազար դրամ, որի 60 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 40 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսվում է լուսավորության ցանցի կառուցում 600 գծամետր երկարությամբ եւ 30 լուսատուների տեղադրմամբ: Այստեղ շինարարական աշխատանքներն ավարտվել են մոտ 80 տոկոսով: Ծովինարի ոռոգման համակարգերի կառուցման ծրագրի պայմանագրային արժեքը կազմում է 32 միլիոն 280 հազար դրամ, որի 70 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 30 տոկոսը՝ Ծովինարի համայնքապետարանը: Ծրագրով նախատեսվում է ոռոգման ներքին ցանցի կառուցում երկաթբետոնյա վաքերով եւ մետաղական խողովակներով, 2-դ թաղամասի 6-դ փողոցում, շուրջ 700 գծամետր երկարությամբ: Շինարարական աշխատանքներն ավարտվել են 50 տոկոսով: Աշխատանքները նախատեսված է ավարտել մինչեւ տարեվերջ: Ծովինարի մշակույթի կենտրոնի հիմնանորոգման պայմանագրային արժեքը կազմում է 19 միլիոն 980 հազար դրամ, որի 50 տոկոսը հատկացնում է ՀՀ կառավարությունը, 50 տոկոսը՝ Մարտունու համայնքապետարանը: Ծրագրով նախատեսվում է Ծովինարի մշակույթի կենտրոնի ներքին հարդարման աշխատանքների իրականացում: Աշխատանքներն այստեղ ավարտվել են մոտ 60 տոկոսով: Ծանոթացա շինարության ժամանակ ի հայտ եկած խնդիրներին, նկատված թերությունների շուրջ եղան դիտողություններ եւ առաջարկություններ, սխալների շտկման ուղղությամբ տրվեցին համապատասխան հանձնարարականներ: Բոլոր ծրագրերն էլ կենսական նշանակություն ունեն Ծովինարի բնակչության համար: Դրանց իրականացման արդյունքում վերջապես երկար տարիների ընդմիջումից հետո կվերաբացվի Ծովինարի մանկապարտեզը, կարդիականացվի մշակույթի կենտրոնը, ոռոգման ներքին ցանցը, կավելանան ասֆալտապատ ճանապարհների մակերեսները, լուսավորվող փողոցները: Առաջիկա տարիների ընթացքում եւս Ծովինարում կներդրվեն կենսական նշանակության նոր ծրագրեր, որոնց շնորհիվ կկարգավորվեն գյուղում տասնամյակներով կուտակված բազմաբնույթ հիմնախնդիրները:

ԼՈՒՐԵՐ

ԽՆԱՄՔԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության կողմից տուն-ինտերնատների, հոգեկան խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոնների, մանկատների եւ այլ նմանատիպ հաստատությունների կարիքների համար սննդի մատակարարման նպատակով հայտարարված գնման ընթացակարգերին մասնակցած «Դանինի» հայաստանյան մասնաճյուղ առանձնացված ստորաբաժանման, «Տումոե», «Ֆուդսիթի», «Ջուզեպպե» եւ «Խաչմիք» ընկերությունների վարքագիծը որակել է որպես հակամրցակցային համաձայնություն:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ վերոնշյալ ընկերությունները հանդիսացել են փոխկապակցված անձինք, որոնք 2021 թվականի նոյեմբերի 1-ից մինչեւ 2022 թվականի հունիսի 31-ն ընկած ժամանակահատվածում մասնակցել են էլեկտրոնային աճուրդի ձեւով հայտարարված գնման ընթացակարգերին՝ վարելով համաձայնեցված քաղաքականություն:

Մասնավորապես, գործելով «Ֆուդսիթի» ընկերության օգտին՝ մյուս չորս ընկերություններն այն սակարկումների ընթացքում, որտեղ մրցակիցը սակարկման ընթացքում ներկայացրել է այնպիսի գին, որը ցածր է եղել «Ֆուդսիթի» ընկերության նախնական գնային առաջարկից, ներկայացրել են անհամեմատ ցածր գներ՝ բացառելով մրցակիցների կողմից սակարկելու հնարավորությունը, խաթարելով գնման ընթացակարգը, իսկ այն սակարկումների ընթացքում, որտեղ «Ֆուդսիթի» ընկերությանն առաջին փորձից հաջողվել է հաղթող ճանաչվել, կամ գնման առարկան դուրս է եղել վերջինիս հետաքրքրությունների շրջանակից, սակարկումներին չեն մասնակցել:

Հանձնաժողովի որոշմամբ՝ վերոնշյալ ընկերությունների նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 13 918 638 դրամ ընդհանուր գումարի չափով:

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒԳԱՆՔ

Բնապահպանական իրավախախտումների հայտնաբերման եւ կանխարգելման նպատակով Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի աշխատակիցները հոկտեմբերի 29-ին Արարատի մարզում հերթական շրջայցի ընթացքում արձանագրել են, որ Երեւան-Երասխ մայրուղու աջակողմյան հատվածում քաղաքացի Գ.Հ.-ն իրեն պատկանող հողամասում այրել է խոզաններ:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտման համար իրավախախտի նկատմամբ կնշանակվի 50.000 ՀՀ դրամի չափով վարչական տուգանք: Վերահսկողական աշխատանքները կրում են շարունակական բնույթ:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՆԱԿՆԿԱԼ ՀՐԱՎԵՐՆԵՐ

«ՍՈՍԻ ԼՈՍԸ» 4-Ի ԱՐԿԱԾԱՅԻՆ ՆԿԱՐԱՀԱՆՈՒՄՆԵՐԸ

Շուտով հեռուստադիտողը հնարավորություն կունենա դիտելու նոր մեգահումորային նախագծի՝ «Սոսի Լոս»-ի 4-րդ երթեւաշրջանը: Այս մասին ArmLur.am-ի հետ զրույցում հայտնեց սցենարիստ Անուշ Պետրոսյանը:

Մեր զրուցակցի խոսքով՝ այս անգամ գրեթե ամբողջությամբ փոխվել է նախագծի անձնակազմը, բացի դերասան Սոս Կարապետյանից եւ Արմինե Պողոսյանից, իսկ նկարահանումներն անցկացվել են Հավայան կղզիներում:

«Նկարահանումները անցել են շատ հետաքրքիր: 15 օր ապրել ենք Հավայան կղզիներում, ու պատկերացրեք՝ ինչեր կլինի, եթե դերասանական անձնակազմը մի վայրում ապրի ու աշխատի: Շատ մեծ արկածների միջով ենք անցել: Առավոտյան 4.30-ին արթնանում էինք, որպեսզի հասնենք անտառ, որից հետո էլ՝ օվկիանոսի ափ՝ նկարահանումներ անելու, քանի որ մեզ հարկավոր էր ստանալ այնպիսի տեսարան, որը նմանվեր չբնակեցված կղզու: Շուրջ 30 րոպե օվկիանոսի միջով քայլել ենք՝ տեխնիկան բարձր գլխներիս դրած, որ կարողանայինք նկարահանումներ անել: Նկարահանումները անցել են շատ զավեշտալի, անգամ նկարահանել ենք տեղի բնակիչներին, հրավիրել ենք պարողների, դերասանների»,- նշեց մեր զրուցակիցը:

Ըստ Անուշ Պետրոսյանի՝ նախագիծը մասշտաբայնորեն շատ մեծ է, ունի շատ մեծ բյուջե եւ պահանջում է շատ մեծ ծախսեր: Նրա կարծիքով՝ նախագիծը շատ ստացված է, հանդիսատեսի սպասելիքները կարդարացվեն:

«Նկարահանումները հատուկ արվել են Մաու կղզում, որը հայտնի է իր կախարդական բնությամբ: Պատկերացրեք՝ 3:30 ժամ բարձրացել ենք մի նեղ ճանապարհով, եւ երբ ներքեւ էինք նայում, ամպերը մեր ոտքերի տակ էին հայտնվում. խենթանալու տեսարան էր: Առաջին անգամ ցուցադրելու ենք անանասի պլանտացիա, հատուկ մրգերի ծառեր, որոնք առաջին անգամ մեր նախագծում են մարդիկ տեսնելու»,- հավելեց նա:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ՇՈՈՒԲԻԶՆԵՍ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՀԱՎԱՔԻ ՄԱՍԻՆ

Երեկ Արցախի Հանրապետությունում՝ «Վերածնունդ» հրապարակում, բազմահազարանոց հանրահավաք էր՝ ի պաշտպանություն Արցախի ժողովրդի անվտանգության: Արցախցիները եւս մեկ անգամ վերահաստատեցին, որ Արցախը ոչ մի դեպքում չի կարող լինել Ադրբեջանի կազմում՝ ընդունելով հայտարարություն: Ըստ հայտարարության՝ արցախահայությունը ՀՀ իշխանություններից պահանջում է հաշվի առնել իրենց շահերը եւ տեր կանգնել Հայաստանի զավակ Արցախին:

Այս ոգեշնչող հանրահավաքը ոգեւորել է նաեւ շոուբիզների ներկայացուցիչներին, որոնք իրենց գրառումներով աջակցել են նրանց.

Երգչուհի Սոֆի Մխեյան ⇩

Երգիչ Վարդան Բադալյան ⇨

ՀՀ վաստակավոր արտիստ Արսեն Գրիգորյան (Մրո) ⇨

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԳԵՐԱԶԱՆՑԵԼ Է ՌԵԿՈՐԴԸ

«Ֆորմուլա-1»-ի կրկնակի չեմպիոն Մաքս Ֆերստապենը 34-րդ հաղթանակն է տարել կարիերայում:

Այս մրցաշրջանում «Ռեդ Բուլի» հոլանդացի մրցարշավորդը տարել է 14-րդ հաղթանակը եւ մեկ մրցաշրջանի փուլերում հաղթանակների քանակով գերազանցել է գերմանացիներ Միխայել Շումախերի եւ Սեբաստիան Ֆետելի ռեկորդը: Շումախերը 2004 թվականին էր 13 հաղթանակ տարել, Ֆետելը՝ 2013-ին:

Մաքս Ֆերստապենն այս մրցաշրջանում ժամանակից շուտ էր նվաճել տիտղոսը՝ պաշտպանելով անցած տարվա չեմպիոնությունը:

ԿՊԱՅՔԱՐԵՆ

Մադրիդի «Ռեալի» պաշտպան Ալվարո Օդրիոսոլան կարող է վերադառնալ Իտալիայի առաջնություն: Իսպանացի ֆուտբոլիստի տրանսֆերի համար կպայքարեն Իտալիայի չեմպիոն «Միլանն» ու Թուրինի «Յուվենտուսը»:

Անցած մրցաշրջանում Օդրիոսոլան վարձակալությամբ հանդես էր գալիս իտալական «Ֆիորնտինայում»: Այս մրցաշրջանում նա դեռ ոչ մի հանդիպման չի մասնակցել իտալացի Կառլո Անչելոտիի գլխավորած թիմում: Արքայական ակումբը պատրաստ է վաճառել 26-ամյա ֆուտբոլիստի տրանսֆերը:

Օդրիոսոլան 2018-ին «Ռեալ Սոսիեդադից» է տեղափոխվել «Ռեալ»: Նա վարձակալությամբ խաղացել է նաեւ Գերմանիայի չեմպիոն Մյունխենի «Բավարիայում»:

«ԻՆՏԵՐ ՄԱՅԱՄԻՆ» ՀՈՒՅՍ ՈՒՆԻ

Ամերիկյան «Ինտեր Մայամիի» ղեկավարությունը հույս ունի, որ Ֆրանսիայի չեմպիոն ՊՍԺ-ի 35-ամյա արգենտինացի հարձակվող Լիոնել Մեսին հաջորդ ամռանը կընդունի իրենց առաջարկը եւ ազատ գործակալի կարգավիճակում կտեղափոխվի Ֆլորիդա:

Մեսին այժմ դիտարկում է «Բարսելոնա» վերադառնալու եւ ՊՍԺ-ի հետ պայմանագիրը երկարաձգելու տարբերակները:

Հյուսիսամերիկյան ՄԼՍ-ը ներկայացնող «Ինտեր Մայամիի» ղեկավարները մի քանի հանդիպում են ունեցել Մեսիի հոր հետ: Խորխե Մեսին ֆուտբոլիստի գործակալն է:

«Ինտեր Մայամիի» համասեփականատերերից է «Մանչեսթեր Յունայթեդի» եւ Անգլիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստ Դեւիդ Բեքհեմը:

● *Հոկտեմբերի 29-ին Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի կունենա Հայկ Դավթյանի եւ Աննա Դավթյան-Շիրիկյանի համերգը: Տոմսերի արժեքը՝2500 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են մասնագիտական հիվանդություն եւ աշխատանքային խեղում ստացած, ինչպես նաեւ ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողի երաշխիքները:

Ալիսա Դանիելյան (28 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային խեղման պատճառով աշխատունակությունը կորցրած աշխատողի աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են մինչեւ աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելը: Աշխատողի աշխատունակությունը չվերականգնվելու եւ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում գործատուն սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը, եթե առկա է հակացուցման մասին լիազոր մարմնի տված համապատասխան եզրակացություն՝ տվյալ աշխատանքով զբաղվելու վերաբերյալ: Հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելուց հետո աշխատողն իր աշխատանքային պարտականությունների պատշաճ կատարման կամ նույն գործատուի մոտ այլ աշխատանքի անցնելու նպատակով կարող է դիմել գործատուին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով խելամիտ հարմարեցումներ ստանալու նպատակով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սույն հոդվածի 1-ին մասով չնախատեսված դեպքերում ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողները պահպանում են իրենց աշխատատեղը եւ պաշտոնը, եթե նրանք ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չեն ներկայացել ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր, եթե օրենքով եւ այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված չէ, որ որոշակի հիվանդությունների դեպքում աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են ավելի երկար ժամանակով:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ո՞րն է ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նպատակը:

Արտակ Արզումանյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագրի նպատակն է մշակել եւ իրականացնել կլիմայի փոփոխության հետեւանքով ջրային ռեսուրսների եւ ջրաէկոհամակարգերի վրա բացասական ազդեցությունների եւ դրանց հետեւանքով կորուստների ու վնասների մեղմմանն ու նվազեցմանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաեւ ապահովել կլիմայի փոփոխության հարմարվողականության նկատառումների ներառումը ջրային ռեսուրսներին վերաբերող ռազմավարություններում, ծրագրերում եւ ջրավազանային կառավարման պլաններում:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշվի առնելով կլիմայի փոփոխությամբ պայմանավորված ջրային ռեսուրսների վրա ազդող գործոնների բնույթը եւ դրանց փոփոխականությունը՝ ջրային ռեսուրսների ոլորտում կլիմայի փոփոխության հարմարվողականության ծրագիրը հաստատվում է հնգամյա պարբերականությամբ:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնի երիտասարդական ծրագրի մենակատարուհի Ջուլիանա Գրիգորյանը հաղթել է Operalia 2022 հեղինակավոր մրցություն: Մրցանակները հանձնել է մրցույթի հիմնադիր, աշխարհահռչակ օպերային երգիչ Պլասիդո Դոմինգոն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.10.2022**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: